

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասի բ. ենթակետով սահմանվել է, որ 2018 թվականին շարունակվում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը նաև «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 8 հավելվածի 4-րդ կետով սահմանված սանդղակին համապատասխան՝ մինչև 1932 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձանց:

**Մինչև 1932 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված անձինք՝ հաշվառվելու և ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու համար, կարող են դիմել իրենց տարածքի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:**

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի

առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն